ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945–2011 թթ., *Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 122 էջ:*

Խորհրդային Միության պատմության, առավել ևս հետպատերազմյան տասնամյակների անկողմնակալ և հանգամանալից ուսումնասիրությունը, անկասկած, արժևորվում է ոչ միայն պատմության լուսաբանման առումով, այսինքն՝ ունի ոչ միայն պատմագրական նշանակություն: Այն որոշակիորեն կարևորվում է նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ի հայտ եկած բազում հիմնախնդիրների հիմնարար ճանաչողության, գնահատման ու դրանց լուծման նպատակով արդյունավետ քաղաքականության կիրառման համար. հանգամանք, որ վերաբերում է նաև տնտեսությանը, մշակույթին, ընդհանրական գիտությանը, կրթությանը, այլ կերպ ասած՝ արժեքային այն համակարգին, որը բովանդակում էր խորհրդային հասարակությունը, և որը, շատ կամ քիչ, ժառանգվել է Հայաստանի երրորդ հանրապետության կողմից:

Ներկայացվող աշխատության՝ համեմատաբար սեղմ ծավալում Հ. Աբրահամյանը լուսաբանել է հետպատերազմյան առաջին տարիներին խորհրդային հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած առանցքային իրադարձությունները, 1950–1960-ական թվականների զարգացումները, Խորհրդային Միության՝ 1960–1980-ական թվականների ներքին և արտաքին քաղաքականությունը, այդ շրջանում խորհրդային համակարգում առաջացած ճգնաժամը, գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունն ու հետխորհրդային հասարակական կյանքում՝ ընդհուպ մինչև 2011 թ. ի հայտ եկած կարևորագույն իրողություններն ու գործընթացները:

Աշխատության մեջ հանգամանալից պարզաբանվել են խրուշչովյան ղեկավարության կողմից ստալինյան անհատի պաշտամունքի հաղթահարման նպատակով ձեռնարկված քայլերը: Միաժամանակ քննական լույսի ներքո ներկայացվել է այդ շրջանին բնորոշ ներկուսակցական և ներքաղաքական պայքարը, որը պատմագրության մեջ առ այսօր խիստ տարբեր գնահատականների է արժանացել: Հեղինակն ըստ ամենայնի փաստում է, որ որքան էլ խրուշչովյան կառավարությունը փորձում էր ձերբազատվել տասնամյակների ընթացքում երկրում արմատավորված՝ կարծրացած աշխատանքի հին, բյուրոկրատական մեթոդներից, այդուհանդերձ, լիարժեք հաջողություն ունենալ չէր կարող, քանի որ այդ կառավարության անդամները կամ առնվազն նրանցից շատերը նույնպես մասնակից էին եղել երկրում իրականացված օրինախախտումներին և, հետևաբար, ունեին նաև մեղսակցության իրենց բաժինը: Այդ իրավիճակն էլ, շարունակ խորացնելով երկրի ղեկավարության ներսում առկա ներկուսակցական պայքարը, ի վերջո, պետք է հանգեցներ կարճ ժամանակ անց տեղի ունեցած՝ ամենքիս հայտնի փոփոխություններին, այն է՝ մի նոր, այսպես կոչված, «բրեժնևյան» ժամանակաշրջանի սկզբնավորմանը, որի ընթացքում երկիրը սուզվեց տնտեսական, բարոյաքաղաքական նոր ճգնաժամի մեջ: Չնայած, ինչպես իրավամբ նշում է հեղինակը, բրեժնևյան նոր կառավարությունն իր հերթին, գիտակցելով կառավարման առկա, հին համակարգի անհեռանկարայնությունը, փորձում էր փոփոխել, առողջացնել և ավելի կենսունակ դարձնել այդ համակարգը, այնուհանդերձ, ճգնաժամը շարունակ ավելի էր խորանում, և մինչև իսկ միութենական հանրապետություններին ավելի մեծ իրավունքներ տալու փորձերը դրա հաղթահարման հարցում էական տեղաշարժերի չհանգեցրեցին:

Հ. Աբրահամյանն իրավացիորեն դրա հիմնական պատճառը համարում է այն հանգամանքը, որ որքան էլ երկրի ղեկավարությունը տարբեր համաժողովներում, տարբեր ամբիոններից բարձրաձայնում էր

առկա հիմնախնդիրների, ինչպես նաև դրանց դեմ պայքարի անհրաժեշտության և ուղիների մասին, այդուհանդերձ ընդունված որոշումները հիմնականում մնում էին թղթի վրա, քանի որ երկրի քաղաքական վերնախավի շրջանում գերիշխում էր պահպանողական, հին և կարծրացած մտայնությունը, ինչն էլ խոչընդոտում էր պետական-հասարակական համակարգի բարեփոխմանը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև 1980-ական թվականների երկրորդ կեսի հետ կապված Հ. Աբրահամյանի քննական լուսաբանումները: Այդ շրջանում գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը ձգտում էր պետական և հասարակական համակարգի բարեփոխմանը որակական նոր ընթացք հաղորդել. մի քաղաքականություն, որը, ինչպես պատկերավոր հեղինակն է բնութագրում, փորձեց սոցիալիզմին նոր շունչ հաղորդել, այն արդիականացնել՝ առաջ քաշելով «սոցիալիզմը մարդկային դեմքով» նոր կարգախոսը և ձգտելով «արագացման» նոր կուրսով արագացնել նաև երկրի զարգացումը: Դա, սակայն, նույնպես մնաց անիրագործելի: Ավելին, գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունն ավարտվեց նրանով, որ փլուզվեցին Խորհրդային Միությունը և սոցիալիստական ողջ համակարգը:

Խորհրդային համակարգի ճգնաժամի և գորբաչովյան վերակառուցման քաղաքականության, հասարակության վերափոխման, ժողովրդավարացման, քաղաքական կուսակցությունների ձևավորման ուղղությամբ ի հայտ եկած նախաձեռնությունների բազմակողմանի վերլուծությունը, անկասկած, հանդիսանում է աշխատության կարևոր արժանիքներից մեկը:

Հեղինակն իր ուսումնասիրության մեջ այնուհետև հանգամանալից անդրադառնում է ինչպես նոր թավշյա հեղափոխություններին, որոնց արդյունքում ԽՍՀՄ-ի հենքի վրա առաջացան 15 նորանկախ հանրապետություններ, այնպես էլ կենտրոնական և հարավ-արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում սկսված նոր գործընթացներին, որոնք այնտեղ ևս հանգեցրեցին հին կարգերի փլուզմանն ու նոր կարգերի ձևավորմանը: Տուրք չտալով այդ գործընթացների վերաբերյալ պատմագրության մեջ ի հայտ եկած իրարամերժ, հաճախ նաև խիստ ծայրահեղության հասնող տեսակետներին ու գնահատականներին՝ նա իրադարձությունները ներկայացնում է իրենց շղթայական կապի մեջ, մեկ ընդհանրական համատեքստում՝ ընթերցողին հնարավորություն ընձեռելով խնդրո առարկա հարցերի վերաբերյալ կատարել իր սեփական իրատեսական եզրահանգումները:

Աշխատության վերջին բաժնում լուսաբանված են հետխորհրդային ժամանակաշրջանում Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մյուս պետությունների փոխհարաբերությունները: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նորանկախ պետություններում տեղի ունեցած քաղաքական նոր զարգացումների, շուկայական տնտեսության կայացման և հարակից գործընթացների վերաբերյալ հեղինակի կողմից կատարված պարզաբանումները: Ուրախալի է, որ (ինչպես և պետք էր ակնկալել), այդ հարցերի շարքում առանցքային տեղ է զբաղեցնում հատկապես Ռուսաստանի Դաշնության ու Հայաստանի Հանրապետության երկկողմ փոխհարաբերությունների և երկու երկրների միջև իրավահավասարության սկզբունքի վրա հիմնված նոր կարգի դաշինքի ձևավորման լուսաբանումը:

Եթե նկատի առնենք, որ պատմական իրադարձություններով չափազանց հարուստ այդ ժամանակաշրջանն առ այսօր հիմնականում մասնակի է լուսաբանվել, ապա Հ. Աբրահամյանի աշխատանքի կարևորությունն էլ ավելի ընդգծուն կդառնա: Նրա ուսումնասիրության մեջ, ըստ առանձին փուլերի, ներկայացվել են այն իրողությունները, որոնցով անցել են խորհրդային բոլոր ժողովուրդները: Դրանք վերաբերում են ինչպես Հայրենական պատերազմից հետո ծավալված խաղաղ շինարարության գործընթացին, այն-

պես էլ երկու հակամարտ հասարակարգերի միջև «սառը պատերազմի» հրահրմանը, երկրի զարգացման հնարավորությունների ոչ արդյունավետ օգտագործմանը, ներքաղաքական ճգնաժամի բնույթին և ընթացքին, ԽՍՀՄ-ի փլուզմանն ու դրան հաջորդող գործընթացներին, որոնք, բնականաբար, այս կամ այն չափով վերաբերում են հայ ժողովրդին, ուստի որոշակիորեն կազմում են նաև հայոց պատմության անբաժանելի մասը: Գնահատանքով պետք է նշել, որ աշխատությունում լայն անդրադարձ է կատարվում նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի և դրա հետ կապված զարգացումների լուսաբանմանը:

Ամփոփենք, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Աբրահամյանի՝ «Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945–2011 թթ.» խորագիրը կրող աշխատությունը կարևոր ներդրում է ինչպես խորհրդային ետպատերազմյան, այնպես էլ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անցումային հասարակական կյանքում տեղի ունեցած կարևորագույն զարգացումների, իրադարձությունների, հարկ եղած դեպքում՝ նաև դրանց պատճառահետևանքային կապերի ու փոխազդեցությունների պարզաբանման առումով:

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ